

կամ քափիթալի ուժը, անոր կրծող, անբարոյացնող դերը, բայց ելք մը չեն ցոյց տար, ոչ թէ անոր համար որ դիտումնաւոր ըլլալէ աւելի կը նախընտրեն իրապաշտ ըլլալ, այլ պարզ պատճառով, – իրենք իրենց մէջ դեռ որոշած չեն այդ ելքը:

Չկարծէք թէ ես կը ցանկայի որ Գ. Զօհրապ ըլլար դիտումնաւոր կամ *թանտանսիէօ* գրող մը. քա՛ն լիցի: Բայց գրողն ինքը իբր մարդ երբ իր ներսն ունենալ որոշ, դրական, անյեղլի ու անյողդողդ սկզբունքներ, անպատճառ իր գեղարուեստին մէջ – նոյն իսկ «Գեղարուեստը գեղարուեստի համար» գրած ատեն, – կ'արտացոլացնէ այդ համոզումները, այդ սկզբունքները... Իսկ ի՞նչ են սկզբունքները, եթէ ոչ աշխարհայեացքի խնդիրներ: Նաբօլէօն երբ կայսր եղաւ, որքան ուզեց ստեղծել ֆրանսական արիսթօքրաթիք կայսրութիւն մը, անկարող եղաւ, վասն զի սնուած էր Մեն Զեղափոխութեան սկզբունքներով:

Հայկական *Լիպէրալիզմը*, ինչպէս եւ առհասարակ լիպէրալիզմը – չունի եւ ոչ մէկ արմատական միջոց իր իսկ ձաղկած հասարակական չարիքներուն դէմ: Ան կը մատնանշէ չարիքը, բայց ճամբայ չի ցոյցներ, վասն զի ինքը զուրկ է ղեկավար աստղէ մը, ուղեցոյց նպատակակէտէ մը: Զօհրապ այդ խումբէն է եւ խումբին լաւագոյնն է: Տաղանդը հզօր է, քննադատող, թափանցող:

Ճառախօսներէն մին անուանեց անոր *Փօստալը* եւ *Այրին* սիրային վէպեր... Քա՛ն լիցի:

Փօստալին Սուրբիկ հանրմը՝ Սօփասանի *Bel-Ami*ին²⁵ մէջ կը գտնէք, Զօլայի *Paris*ին²⁶ պուրժուական բարեգործութիւնով պարապող կիներուն մէջ կը հանդիպիք: Իսկ ինքը Փօստալ տիտղոսի արժանացածը միթէ քիչ մը նմանութիւն չի՞ բերեր Զօլայի *Նանսին*²⁷ առաջին քայլերուն, երբ ան անմեղ էր, Ասօմուառէն դեռ նոր էր դուրս եկեր: Յիշեցէք այն տեսարանը երբ Նանսա մերկ կը կանգնի հայելիին առջեւ, կը դիտէ իր մարմնին կտրուրթիւնները, կը զմայլի եւ կը խորհի. «Միթէ այսչա՛մի գեղեցկութիւնը զո՞ւր պիտի կորչի»: Իսկ *Փօստալը* կը հագնի Սուրբիկ հանրմի